ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2024թ.-ի մշտադիտարկման արդյունքների

ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՐԵՎԱՆ 2025Թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 03

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ 04

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 05

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 09

ՀԵՏՀԱՅԱՑՔ 16

ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ 18

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 18

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1 19

Հավելված 2 20

Հավելված 3 25

Հավելված 4 28

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՔԿԾ	Քրեակատարողական ծառայություն
ՔԿՀ	Քրեակատարողական հիմնարկ
Խումբ	ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ
ԴՀ	Դատապարտյալների հիվանդանոց
ԳԲՏ	Գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր
ՄԻԱՎ	Մարդու իմունային անբավարարության վիրուս

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Սույն ամփոփագրի մեջ ներկայացնում ենք 2024թ.-ի ընթացքում Հայաստանի Հանրապետության (ՀՀ) արդարադատության նախարարության (ԱՆ) քրեակատարողական հիմնարկներում (ՔԿՀ) և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի (Խումբ) իրականացված մշտադիտարկման արդյունքները:

Տեղեկությունները հավաքագրվել են Խմբի կողմից ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներ կատարած այցելությունների, ազատությունից զրկված անձանցից ստացված ահազանգերի, նրանց հետ ունեցած առանձնազրույցների, հարցազրույցների, ՔԿՀ աշխատակիցների հետ զրույցների, ՔԿՀ գրանցամատյանների ուսումնասիրությունների, պետական մարմիններից՝ ՀՀ արդարադատության նախարարութուն, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն, առողջապահության նախարարություն (ԱՆ), ՀՀ ԱՆ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ և այլն, ստացված պատասխան գրությունների միջոցով: Հաշվետվության համար տեղեկատվության աղբյուր են եղել նաև ՀՀ պատկան մարմինների մեկնաբանությունները և տեղեկությունները, ինչպես նաև միջազգային և ներպետական իրավական նորմերը, հայեցակարգերը, օրենքները, ՀՀ կառավարության որոշումները:

2024 թվականի ընթացքում մշտադիտարկվել են ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում պահվող ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման, պահման պայմանների, ազատությունից զրկված անձանց, խոցելի խմբերի նկատմամբ վերաբերմունքի, ինչպես նաև կրթության և զբաղվածության ապահովման հետ կապված հարցերը:

Սույն ամփոփոագրի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրված մեկնաբանությունները ներկայացված են Հավելված 4-ում:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացվում է ՀՀ արդարադատության նախարարության կողմից՝ պաշտոնական պատասխան գրությամբ տրամադրված տվյալները.





Սույն վիճակագրությունը ցույց է տալիս, որ 2023թ.-ի համեմատ 2024թ.-ին ինքնավնասման/ինքնախեղման և հացադուլի դեպքերը աճել են:

Թեև համաձայն ՀՀ արդարադատության նախարարության տվյալների, 2024թ.-ին մահվան դեպքերը նվազել են 2023թ.-ի համեմատությամբ, այնուամենայնիվ մահվան դեպքերի մեծամասնության պատճառահետևանքային կապը շարունակում է մնալ առողջական վիճակը.



2023թ.-ի ընթացքում տեղի ունեցած մահվան դեպքերից 2-ը ինքնասպանություն է:

Արձանագրված ինքնավնասումների կամ ինքնախեղումների բարձրաձայնված պատճառների հետ կապված ԱՆ-ի կողմից տրամադրված տվյալները ներկայացված են ստորև.





1. Դատապարտյալների հիվանդանոց ՔԿՀ, քաղաքացիական բժշկական կենտրոն տեղափոխվելու ցանկություն, առողջական, դեղորայքի և բուժանձնակազմի հետ կապված խնդիրներ և պահանջներ
2. Նյարդային լարվածության, հոգեկան անկայուն, անհավասարակշիռ հոգեվիճակում գտնվելը
3. ՔԿՀ և ՔԿԾ հետ կապված խնդիրներ (վարչակազմ, շենքային պայմաններ, կայացված որոշումներ, անվտանգային գոտու փոփոխություն, խուզարկություն, արգելված իրերի հայտնաբերում և այլ քրեակատարողական հիմնարկ տեղափոխվելու/չտեղափոխվելու պահանջ)
4. Վարույթն իրականացնող մարմնի, դատարանների կամ դատախազության կողմից կայացված որոշումներին անհամաձայնություն (առաջադրված մեղադրանք, խափանման միջոց, դատավճիռ, պայմանական վաղաժամկետ ազատման մերժում, դատական նիստերի հետաձգում, նիստերին չմասնակցելու ցանկություն և նիստերին չտեղափոխվելը)
5. Ինքնավնասում կամ ինքնախեղում կատարած անձանց կողմից պատճառներ չեն նշվել կամ հայտնվել է, որ այդ մասին կտեղեկացվի այլ պաշտոնատար անձանց
6. Անձնական և ընտանեկան խնդիրներ
7. Տարբեր պահանջներ, այդ թվում անօրինական, և օրինական պահանջներին չենթարկվել (արտահերթ լրացուցիչ հեռախոսազանգ, կերակրադռնակը բաց թողնել, խցից ազատ դուրս գալ, ՔԿՀ միջոցների հաշվին հեռուստացույց, չեն թույլատրել այլ խուց փոխանցել սնունդ, ծխախոտ և այլն)
8. Արտահանձնման հետ կապված խնդիրներ
9. Տարբեր պաշտոնատար անձանց կողմից իրենց հետ ընդունելություն կատարելու ցանկություն
10. Կյանքին վնաս հասցնելու ցանկություն
11. Այլ («սատանան է դրդել»)
12. Հատուկ քանակակազմի հետ կապված խնդիրներ
13. Այլ (ծխախոտ չունենալու, ցավերը մեղմելու և անազատության մեջ պահվելու պատճառներով)

ՀՀ ԱՆ պաշտոնական գրությամբ ներկայացվել է նաև հացադուլների պատճառների վերաբերյալ տվյալները.



1. Վարույթն իրականացնող մարմնի կամ դատարանների կողմից կայացված որոշումներին անհամաձայնություն (առաջադրված մեղադրանք, խափանման միջոց, դատավճիռ, պայմանական վաղաժամկետ ազատման մերժում, դատական նիստերի հետաձգում, նիստերին չմասնակցելու ցանկություն)
2. «ԴՀ» կամ բժշկական մասնաշենք տեղափոխվելու ցանկություն, առողջական և բուժանձնակազմի հետ կապված խնդիրներ և պահանջներ
3. ՔԿՀ և ՔԿԾ հետ կապված խնդիրներ (վարչակազմ, շենքային պայմաններ, կայացված որոշումներ, անվտանգային գոտու փոփոխություն, մեկուսի պահվելու ցանկություն, խուզարկություն, արգելված իրերի հայտնաբերում և այլ քրեակատարողական հիմնարկ տեղափոխվելու պահանջ)
4. Հացադուլ հայտարարած անձանց կողմից պատճառներ չեն նշվել կամ հայտնել են, որ այդ մասին կտեղեկացնեն կոնկրետ պաշտոնատար անձանց
5. Անձնական, ընտանեկան և համակեցության խնդիրներ
6. Տարբեր պաշտոնատար անձանց կողմից իրենց հետ ընդունելություն կատարելու ցանկություն
7. Հաշմանդամության կարգ սահմանելու, բժշկասոցիալական վերափորձաքննության ենթարկվելու, թոշակավորման հետ կապված խնդիրներ
8. Ի աջակցություն Արցախի Հանրապետությում ստեղծված իրավիճակից տուժած հայրենակիցների
9. Այլ (հանգուցյալ հոր հետ երկարատև տեսակցություն ունենալու ցանկություն)
10. Այլ (պահանջում է իրեն տրամադրել սուրճ, մասնաշենքում դուռը բաց թողնել, ցանկացած ժամի հեռախոսակապից օգտվելու թույլտվություն, իր սնունդն առանձին տրամադրել)

Շարունակում է մտահոգիչ մնալ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում կալանավորված անձանց քանակը (տվյալները ԱՆ-ից).



2024թ.-ի ընթացքում Խումբը ՀՀ-ում գործող թվով 10 ՔԿՀ-ներից ստացել է 45 ահազանգ.



ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ահազանգերը կապված են եղել հետևյալ խնդիրների հետ.



1. Դատապարտյալի կամ կալանավորի հիվանդանոց չտեղափոխելը
2. Պայմանական վաղաժամկետ ազատման խնդիր
3. Արտաքին աշխարհի հետ կապին խոչընդոտելը
4. ՔԿՀ-ի աշխատակցի կողմից բռնության կիրառումը
5. Դատապարտյալի/ կալանավորի կողմից բռնության կիրառումը
6. Քրեական գործով հոդված որակման հետ անհամաձայնություն
7. Մահվան դեպք
8. Բժշկական օգնության և սպասարկման հետ կապված խնդիր
9. Հացադուլ
10. Խցային պայմաններ
11. Այլ
12. Արտահանձնում
13. Իրավունքների խախտում
14. Պաշտպանի հետ կապի խնդիր
15. Խցում առկա խնդիրներ
16. Հիմնարկի անմխիթար վիճակը
17. Վարչակազմի հետ խնդիր
18. ՔԿՀ-ում խնդիր
19. Աշխատանքային իրավունքի խախտում

Բացի վերոնշյալ խնդիրներից՝ Խումբն ուսումնասիրությունների ընթացքում արձանագրել է այլ խնդիրներ ևս.

- Վատ վերաբերմունք դատապարտյալների և կալանավորների նկատմամբ ,
- Պահման պայմաններ,
- Խարան և խտրականություն դատապարտյալների և կալանավորների նկատմամբ ,
- Սննդի որակի հետ կապված խնդիրներ,
- Խմբի վերաբերյալ տեղեկատվության պակաս ՔԿՀ և բուժ ծառայության աշխատակիցների կողմից,
- Այլ:

Բժշկական օգնության և սպասարկման հասանելիության և որակի հետ կապված խնդիրներ

- Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ոչ պատշաճ բուժսպասարկման տրամադրում,
- Դեղորայքի որոշ տեսակների բացակայության (սակավության) խնդիր,
- Դեղորայքի տրամադրման ուշացումներ՝ պայմանավորված գնումներով,
- Բուժօգնության կանչերին ոչ պատշաճ արձագանք,
- Ազատազրկված անձանց հարազատների կողմից բերված դեղորայքի կորուստ,
- Հաշմանդամության կարգի անհիմն մերժումներ,
- Քաղաքացիական հիվանդանոց տեղափոխման հետ կապված խնդիրներ,
- Խնամքի հետ կապված խնդիրներ,
- ՔԿՀ մուտք գործելի ոչ պատշաճ բժշկական խորհրդատվություն և տեղեկատվություն՝ բժշկական օգնություն ստանալու մասին,
- ՔԿՀ մուտք գործելիս ոչ պատշաճ հետազոտությունների իրականացում՝ ՄԻԱՎ, հեպատիտներ, սեռավարակներ և այլն, ինչպես նաև կանխարգելիչ նյութերի չտրամադրման խնդիրներ:

Առաջարկություններ

- Վերանայել և ընդլայնել հոգեկան առողջության ոլորտում տրամադրվող աջակցությունը՝ ներգրավելով սոցիալ-հոգեբանական ծառայություններ,
- Ձեռնարկել քայլեր՝ գնումների գործընթացը պարզեցնելու նպատակով,
- Կազմակերպել բուժաշխատողների պարբերական վերապատրաստումներ,
- Ապահովել դեղորայքի պատշաճ քանակը և դրանց պահպանումը,
- Ապահովել անձանց պատշաճ տեղափոխումը քաղաքացիական հիվանդանոցներ,
- Ձեռնարկել քայլեր՝ ապահովելու խնամքի կարիք ունեցող անձանց անհրաժեշտ ծառայությունների հասանելիությունը,
- Ազատազրկված անձանց տրամադրել պատշաճ բժշկական խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում նաև բժշկական օգնություն և սպասարկում:

Սննդի ապահովման և մատակարարման հետ կապված խնդիրներ

- ՔԿՀ-ում տրամադրված դիետիկ սննդի անհամապատասխանություն անձանց առողջական վիճակով պայմանավորված նրանց նշանակված դիետիկ սննդակարգին,
- Տրամադրվող մրգի նվազ քանակություն,
- ԳԲՏ անձանց սննդի տրամադրման ընթացքում խտրականության դրսևորումներ, մասնավորապես՝ մեկանգամյա օգտագործման տարաներով սնունդը տրամադրվում է ԳԲՏ անձանց, որպեսզի չխառնվի մյուսների սննդի հետ /Հավելված 1/,
- Մաքուր ջրի հասանելիության խնդիր, ինչպես նաև հանձնուքների ընդհանուր քաշի մեջ ջրի ներառումը:

Առաջարկություններ

- Դիետիկ սնունդը համապատասխանեցնել անձանց առողջական վիճակով պայմանավորված դիետիկ սննդակարգ,
- Վերանայել սննդի ցանկում մրգի քանակությունը,
- Ապահովել սննդի տրամադրման գործընթացում խտրականության բացառումը,
- Քայլեր ձեռնարկել հանձնուքների քաշի մեջ ջուրը չներառելու մասով:

Հագուստ, անկողնային պարագաներ, հիգիենայի ապահովման խնդիրներ

- ՔԿՀ-ներում պահվող անձանց բացառապես սև կամ մուգ կապույտ հագուստի տրամադրում,
- ՔԿՀ-ի կողմից նոր անկողնային պարագաների տրամադրման խնդիր,
- Նուբարաշեն ՔԿՀ-ի 5-րդ հարկի լոգասենյակի շահագործման խնդիր, որի պատճառով ազատազրկված անձանց այլ հարկ են ուղեկցում՝ լոգանք ընդունելու համար, իսկ նույնասեռական անձինք լոգանք են ընդունում իրենց սենյակում, որտեղ չկան համապատասխան հարմարությունները,
- Աբովյան ՔԿՀ-ում լվացքի մեքենայի քանակի խնդիր. մեկուսարանում բնակվում է 70 հոգի, և առկա է միայն մեկ լվացքի մեքենա, որը չի բավականացնում:

Առաջարկություններ

- Ազատազրկված անձանց տրամադրել ավելի բաց գույնի և որակյալ հագուստ կամ թույլատրել կրել այլ հագուստ,
- Հետևողականություն ցուցաբերել անկողնային պարագաների տրամադրման գործընթացում,
- Վերանորոգել Նուբարաշեն ՔԿՀ-ի 5-րդ հարկի լոգասենյակը և ապահովել նույնասեռական անձանց լոգանքի հնարավորությունը՝ լոգասենյակում,
- Աբովյան ՔԿՀ-ում ավելացնել լվացքի մեքենաների քանակը:

Բռնություն, խտրականություն

- ՔԿՀ վարչակազմի կողմից բռնության դեպքեր՝ ազատազրկված անձանց նկատմամբ,
- Խոցելի խմբերի՝ ԳԲՏ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունք ազատազրկված անձանց կողմից,
- Լվացքատան աշխատակիցների կողմից խտրական վերաբերմունք ԳԲՏ անձանց նկատմամբ՝ հաճախ ԳԲՏ անձանց հագուստը չեն վերցնում լվանալու համար, երբեմն եղել է նաև, որ նրանց հագուստը կորել է,
- Նույնասեռական և նրանց հավասարեցված անձանց առանձնացում մեկ խցում,
- Նույնասեռական անձանց շահագործում հիմնարկի ղեկավարության կողմից ՝ ստիպում են համագործակցել և ազատազրկված անձանց մասին տեղեկատվություն փոխանցել հիմնարկի ղեկավարությանը,
- ՔԿՀ-ներում սանիտարական մաքրման աշխատանքները /որն անվճար է/ կատարում են միայն ԳԲՏ անձինք,
- Նույնասեռական անձի ինքնավնասում՝ պայմանավորված թե՛ ազատազրկված անձանց, թե՛ ՔԿՀ վարչակազմի և բուժանձնակազմի խտրական դրսևորումներով,
- ԳԲՏ անձանց խցերը էապես տարբերվում են այլ խցերից՝ իրենց ոչ բարվոք վիճակով:

Առաջարկություններ

- Իրականացնել պարբերական վերապատրաստումներ ՔԿՀ վարչակազմի համար՝ բռնության, խարանի/խտրականության և այլ թեմաներով,
- Բռնության ցանկացած դրսևորման դեպքում անհապաղ իրականացնել ծառայողական քննություն և տալ համապատասխան իրավական ընթացք,
- Ձեռնարկել քայլեր՝ բացառելու խտրական դրսևորումները ՔԿՀ-ներում, մասնավորապես՝ ԳԲՏ անձանց նկատմամբ,
- Ապահովել հավասար պայմաններ բոլոր ազատազրկված անձանց համար:

Անձնական տվյալների գաղտնիության խախտում

- Աբովյան ՔԿՀ-ում հոգեբանի կողմից անձանց հետ տարվող աշխատանքի ընթացքում հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիության խախտում և տարածում այլ ազատազրկված անձանց շրջանում:

Առաջարկություններ

- Իրականացնել վերապատրաստման դասընթացներ բուժաշխատողների համար՝ ներառելով բժշկական գաղտնիք թեմաները,
- Ապահովել բժշկական և անձնական տվյալների գաղտնիությունը:

Կրթության հասանելիության խոչընդոտներ

- Ազատազրկված անձանց զգալի մասը չի կարողանում մասնակցել կրթական միջոցառումներին՝ աշխատանքային գրաֆիկի պատճառով, ինչը հետագայում բացասաբար է անդրադառնում նրանց պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացում բալային համակարգի վրա:

Առաջարկություններ

- Ձեռնարկել քայլեր՝ ապահովելու կրթության հասանելիությունը ազատազրկված անձանց համար:

ՔԿՀ մասնագետների/աշխատակիցների կարողությունների զարգացման և կազմի համալրման կարիք

- ՔԿՀ-ներում հոգեբանի հաստիքի ավելացման և մասնագիտական կարողությունների զարգացման անհրաժեշտություն,
- ՔԿՀ-ներում այլ թափուր հաստիքների լրացման անհրաժեշտություն:

Առաջարկություններ

- Պարբերաբար իրականացնել վերապատրաստումներ ՔԿՀ բոլոր աշխատակիցների համար,
- Ձեռնարկել քայլեր թափուր հաստիքների լրացման ուղղությամբ:

Խցային պայմաններ /Հավելված 2/

- Խցերում անձանց իրավունքների և պարտականությունների, թույլատրված իրերի ցանկի, ՄԻՊ-ի, դիտորդների խմբի թեժ գծի վերաբերյալ տեղեկատվական թերթիկների բացակայություն,
- Օտարերկրացիների խցերում իրենց հասկանալի լեզվով իրազեկման թերթիկների բացակայություն,
- Խցերի կահավորման խնդիր՝ գույքերի մաշվածություն կամ բացակայություն,
- Նուբարաշեն ՔԿՀ-ում օդափոխության խնդիր,
- Խոնավ և անմխիթար շենքային պայմաններ Երևան-Կենտրոն, ԴՀ, Արթիկ, Աբովյան, Նուբարաշեն, Գորիս ՔԿՀ-ներում,
- Երևան-Կենտրոն ՔԿՀ-ում զուգարանները առանձնացված են կիսապատով և վարագույրով:

Առաջարկություններ

- ՀՀ ԱՆ բոլոր ՔԿՀ-ների խցերում փակցնել անձանց իրավունքների և պարտականությունների, թույլատրված իրերի, ՄԻՊ-ի և Խմբի թեժ գծերի վերաբերյալ տեղեկատվությունը,
- Ապահովել օտարերկրացիներին վերոնշյալ տեղեկատվության հասանելիությունը՝ իրենց հասկանալի լեզվով,

- ՀՀ ԱՆ բոլոր ՔԿՀ-ների խցերում ապահովել անհրաժեշտ գույքի առկայությունը,
- Նուբարաշեն ՔԿՀ-ի այն խցերը, որտեղ բնականոն օդափոխությունը ապհովված չէ, ապահովել օդափոխության համակարգով, իսկ անհնարինության դեպքում՝ դադարեցնել այդ խցերի շահագործումը,
- Երևան-Կենտրոն ՔԿՀ-ի այն խցերում, որտեղ զուգարանը պատով առանձնացված չէ, կատարել առանձացում, իսկ անհնարինության դեպքում դադարեցնել այդ խցերի շահագործումը:

Տեխնիկական խնդիրներ

- Ինտերնետ կապի որակի խնդիր,
- Անվճար հեռախոսակապից օգտվելու խնդիր՝ կապը չի գործում,
- Խմբի թեժ գծի վերաբերյալ տեղեկատվության բացակայություն /Հավելված 2/:

Առաջարկություններ

- Վերանայել ինտերնետ կապի քաղաքականությունը և այն ձեռք բերել ըստ ՔԿՀ-ների ծածկույթի հասանելիության,
- Ապահովել անվճար հեռախոսակապի հասանելիությունը՝ ազատազրկված անձանց համար,
- Նոր դիմակայուն հեռախոսների վրա տեղադրել Խմբի թեժ գիծ հեռախոսահամարը,
- ՀՀ ԱՆ բոլոր ՔԿՀ-ներում փակցնել Խմբի թեժ գծի մասին տեղեկատվություն:

Արթիկ ՔԿՀ-ում

- Ջրամատարակարման և ջրահեռացման համակարգերի խնդիր,
- Հոսանքի մատակարարման խնդիր՝ մալուխների անմխիթար վիճակի պատճառով հոսանքազրկվում է հիմնարկը, որի հետևանքով դժվարանում է հիմնարկի ջեռուցումը, և ավելանում է դրսից հիմնարկի տարածք նյութերի ներթափանցման ռիսկը, հատկապես՝ գիշերային ժամերին,
- Ինտերնետ կապի խնդիր, որի հետևանքով հնարավոր չէ օգտագործել նոր ձեռք բերված պլանշետները:

Առաջարկություններ

- Ապահովել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անխափան աշխատանքը,
- Հոսանքի անխափան մատակարարման նպատակով՝ հիմնարկն ապահովել գեներատորներով:

Դրական փոփոխություններ Հավելված 3

ԱՐԹԻԿ ՔԿՀ-ՈՒՄ

- Իրականացվել են վերանորոգման աշխատանքներ, մասնավորապես՝ վերանորոգվել են երկարատև տեսակցության սենյակները,
- Վերանորոգված սենյակների համար ձեռք է բերվել նոր կահույք,
- Լոգարանի վերանորոգման աշխատանքների համար իրականացվում է գնում:

ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՔԿՀ-ՈՒՄ

- Իրականացվել են վերանորոգման աշխատանքներ, մասնավորապես՝ վերանորոգվել են քննչական սենյակները, մի քանի խցեր առաջին և հինգերորդ հարկում, երկարատև տեսակցության մեկ սենյակ:

ԱՐՄԱՎԻՐ ՔԿՀ-ՈՒՄ

- Իրականացվել են վերանորոգման աշխատանքներ, մասնավորապես՝ վերանորոգվել է բուժմասը ամբողջությամբ, տեսակցության սենյակներից մի քանիսը, լոգասենյակը:

ԵՐԵՎԱՆ-ԿԵՆՏՐՈՆ ՔԿՀ-ՈՒՄ

- Թեթևակի վերանորոգվել է մի քանի խուց և միջանցքը՝ առանց հիմնային վերանորոգման:

ԱԲՈՎՅԱՆ ՔԿՀ-ՈՒՄ

- Իրականացվել են վերանորոգման աշխատանքներ, մասնավորապես՝ վերանորոգվել են խցերը, մարզադահլիճը, գրադարանը, դասասենյակները, համակարգչային սենյակը, միջանցքները:
- Կահավորվել է խցերի մեծ մասը, գրադարանը, դասասենյակը, համակարգչային սենյակը:

ՀԵՏՀԱՅԱՑՔ

Խումբը տարիներ շարունակ բարձրացրել է ՔԿՀ-ներում արձանագրված խնդիրները սակայն, ցավոք, 2024թ.-ի ընթացքում կատարված ուսումնասիրությունները և ստացված ահազանգերը ցույց են տվել, որ խնդիրների զգալի մասը շարունակում են արդիական մնալ:

2018թ.-ի հեղափոխությունից հետո նոր կառավարությունը որդեգրեց ժողովրդավար քաղաքականություն, որտեղ յուրաքանչյուր ազատազրկված անձի նկատմամբ պետք է ապահովվեր հարգալից վերաբերմունք, պետք է շարունակական քայլեր ձեռնարկվեին ազատությունից զրկված անձանց հիմնական իրավունքների երաշխավորման, այդ թվում՝ արտաքին աշխարհի հետ կապի ամրապնդման, միջնակարգ կրթության իրավունքի ապահովման, պահման պայմանների բարելավման, նրանց տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարձրացման, վերասոցիալականացման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով, բոլորի՝ օրենքի առջև հավասարության երաշխավորման, խտրականության դրսևորումների կանխման, ինչպես նաև հավասար իրավունքների իրագործման նպատակով, սակայն Խմբի 2024թ.-ի մշտադիտարկումը ևս մեկ անգամ ցույց տվեց, որ փաստացի իրավիճակն այլ է:

Անձանց ոտնահարված իրավունքները վերականգնելու նպատակով Խումբը արձանագրված խախտումների դեպքերի վերաբերյալ գրություններ է ուղարկել համապատասխան գերատեսչություններին, ինչպես նաև հիմնարկներում խնդիրները քննարկել է հիմնարկների պետերի հետ: Խնդիրները մեծամասամբ լուծվել են. դրանք վերաբերել են բժշկական օգնության և սպասարկման տրամադրմանը, խցում պահվող անձանց համատեղելիությանը, հիգիենայի պարագաների տրամադրմանը, հեռախոսակապից օգտվելուն, կրթական ծրագրերի մասնակցությանը և այլն:
Խումբը նաև հանդիպումներ է ունեցել ՀՀ Արդարադատության նախարարի տեղակալի հետ, որտեղ քննարկվել են առկա և հրատապ լուծում պահանջող համակարգային խնդիրները:

Արձանագրված խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ իրականացված քայլերը ևս մեկ անգամ ապացուցում են Խմբի՝ նման ձևաչափով գործունեության կարևորությունը, և Խումբը, հավատարիմ մնալով իր առջև դրված նպատակներին, շարունակելու է իր անկախ գործունեությունը:

Խմբի գործունեության խոչընդոտներ

Մշտադիտարկումների ընթացքում արձանագրված բժշկական օգնությանը և սպասարկմանն առնչվող խնդիրների լուծման նպատակով՝ Խումբը թվով 7 գրություն է ուղարկել ՀՀ Առողջապահության նախարարություն, որից ստացել է միայն մեկ գրության պատասխան: Հետևաբար, Խումբը ստիպված է եղել կրկնակի հարցումներ ուղարկել: Դրանց նույնպես պատասխաններ չստանալով՝ Խումբը դիմել է ՀՀ վարչապետին՝ խնդրելով հանձնարարել վերոնշյալ նախարարությանը պատասխանել գրություններին: Հաշվի առնելով Առողջապահության նախարարության նման գործելաոճը՝ Խումբը հրատապ խնդիրների դեպքում ստիպված է եղել ուղիղ կապ հաստատել Քրեակատարողական բժշկության կենտրոն ՊՈԱԿ-ի հետ:

Խմբի անդամները, փորձագետները և փորձնակները գործում են հասարակական հիմունքներով:

Դիտորդական խմբի կազմը՝

Սերգեյ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Խմբի նախագահ, անդամ

Զարուհի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Անդամ

Արման ՍԱՀԱԿՅԱՆ
Անդամ

Արայիկ ՋԱԼՅԱՆ
Անդամ

Շուշան ԽՆԿՈՅԱՆ
Անդամ

Անահիտ ՄԿՐՏՉՅԱՆ
Անդամ

Մարիամ ԱՆՏՈՆՅԱՆ
Անդամ

Հասմիկ ՄԽԻԹԱՐՅԱՆ
Անդամ

Միհեր ԿԱՐԱԳՈՋՅԱՆ
Անդամ

Թեմիկ ԽԱԼԱՓՅԱՆ
Անդամ

Ալբերտ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Փորձնակ

Անիկ ԱՍԱՏՐՅԱՆ
Փորձնակ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Արմավիր ՔԿՀ

Նուբարաշեն ՔԿՀ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Երևան-Կենտրոն ՔԿՀ





Դատապարտյալների հիվանդանոց ՔԿՀ



Արմավիր ՔԿՀ



Արթիկ քհՀ





Աբովյան ՔԿՀ

Նուբարաշեն ՔԿՀ









ՀԱՎԵԼՎԱԾ 3

Արթիկ ՔԿՀ



Նուբարաշեն ՔԿՀ



Արմավիր ՔԿՀ





Երևան-Կենտրոն ՔԿՀ





Աբովյան ՔԿՀ







ՀԱՎԵԼՎԱԾ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

№ /08.11/7216-2025
«19» փետրվարի 2025թ.

ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԵՐԳԵՅ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գաբրիելյան,

Ի պատասխան Ձեր՝ 2025 թվականի հունվարի 17-ի Արդարադատության նախարարություն հասցեագրված թիվ 25-002 գրության՝ հիմքում ունենալով Արդարադատության նախարարության (այսուհետ՝ ԱՆ) քրեակատարողական ծառայությունից (այսուհետ՝ ՔԿԾ) ստացված տվյալները, հայտնում եմ հետևյալը.

✓ **2024 թվականի ընթացքում սննդի ապահովման և մատակարարման վերաբերյալ.**

ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներում (այսուհետ նաև՝ Հիմնարկ) անազատության մեջ պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների համար սննդի պատրաստման ծառայություններ ձեռքբերելու նպատակով՝ ՔԿԾ-ի և մատակարար կազմակերպության միջև կնքված պայմանագրի համաձայն՝ Հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների միջին թվաքանակի մինչև 20%-ի չափով, տարբեր հիվանդություններով տառապող անձանց առողջության պահպանման իրավունքի

իրացման նպատակով, բժշկի կողմից տրված եզրակացության հիման վրա, մատակարար կազմակերպությունն ապահովում է դիետիկ սնունդ:

Դիետիկ սննդի տրամադրումն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով Առողջապահության նախարարության «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ը ներկայացրել է սննդակարգեր, ըստ չորս նոզոլոգիական խմբերի:

Ստորև ներկայացվում են կալանավորված անձանց և դատապարտյալների համար նախընտրելի միջինացված դիետիկ սննդակարգերը՝ ըստ նոզոլոգիական խմբերի.

1. *Սիրտ-անոթային հիվանդություններ*
2. *Աղեստամոքսային տրակտի հիվանդություններ*
3. *Շաքարային դիաբետ*
4. *Խրոնիկական հեպատիտներ, լյարդի ցիռոզ*

Հիմնարկներում անազատության մեջ պահվող, տարբեր հիվանդություններով տառապող անձանց համար դիետիկ սնունդ տրամադրվում է բժշկի կողմից տրված եզրակացության համաձայն, ըստ որի, մատակարար կազմակերպության կողմից համապատասխան նոզոլոգիական խմբերի, պատրաստվում են դիետիկ ճաշատեսակներ և մատակարարվում Հիմնարկներ և/կամ տարբեր բժշկական հաստատություններ:

2024 թվականի ընթացքում Հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների համար տրամադրվող սննդի ապահովումն իրականացվել է «ԷԼԻՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից:

Հարկ է նշել, որ Հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց տրվող սննդի հատկացման, ճաշացուցակի, մատակարար կազմակերպության կողմից հատկացվող պատրաստի սննդի ստացման, սննդամթերքի ցանկի, սննդի քանակի և որակի հսկողությունն իրականացվում է համաձայն Արդարադատության նախարարի 2024 թվականի հունիսի 20-ի թիվ 354-Ն հրամանի (այսուհետ՝ Հրաման):

Համաձայն Հրամանի՝ Հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց մատակարարվող սննդի չափաբաժինների նկատմամբ հսկողությունն իրականացվում է ամենօրյա ռեժիմով՝ յուրաքանչյուր մատակարարման ժամանակ: Քանակի և որակի հսկողությունն իրականացնում է օրվա պատասխանատու հերթապահի կողմից, վերջինիս

ներկայությամբ ստուգվում և կշռվում է մատակարար կազմակերպության կողմից մատակարարված պատրաստի սնունդը, համտեսի և հոտի ստուգման ձևով գնահատվում է սննդի որակը, ինչպես նաև ստուգվում է յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համապատասխանությունը ճաշացանկով հաստատված չափաբաժիններին: Սննդի որակի ստուգման և հետագայում հնարավոր խնդիրների բացահայտման նպատակով բոլոր ճաշատեսակներից իրականացվում է մատակարարվող սննդի նմուշառում, որոնք պահպանվում են համապատասխան սառնարաններում՝ 48 ժամ տևողությամբ:

Հավելենք նաև, որ ճաշացուցակը կազմելիս, կալանավորված անձի կամ դատապարտյալի դիմումի հիման վրա, հաշվի է առնվում ազգային և կրոնական նախընտրությունները, ինչով և պայմանավորված մատակարար կազմակերպության կողմից որոշ դեպքերում (դիետիկ սննդի կամ ազգային և կրոնական նախընտրությունները հաշվի առնելով՝ ընդհանուր ճաշացանկից տարբերվող սննդի տրամադրում) մատակարարվող սնունդը տրամադրվում է մեկանգամյա օգտագործման տարաներով:

Անդրադառնալով մրգի տրամադրման նվազագույն քանակությանը՝ հարկ է նշել, որ հատկացվում է Կառավարության 2023 թվականի փետրվարի 23.-ի թիվ 245-Ն որոշման պահանջներին համապատասխան: Մրգի փոխարեն, համաձայն վերոնշյալ որոշման հավելված 2-ի 2-րդ աղյուսակի, տրամադրվում է նաև կոմպոտներ, մրգահյութեր, ջեմեր և մրգին փոխարինող այլ սննդամթերքներ:

Ինչ վերաբերում է խմելու ջրին, ապա այն հասանելի է բոլոր Հիմնարկներում, իսկ փոխանցվող հանձնուքների ընդհանուր քաշում հեղուկների (այդ թվում նաև՝ ջրի) ներառման վերաբերյալ բարձրացված հարցի կապակցությամբ հայտնում եմ, որ այն ամրագրված է օրենսդրորեն:

- ✓ **Հագուստի, անկողնային պարագաների, հիգիենայի ապահովման վերաբերյալ.**

Հարկ է նշել, որ անազատության մեջ պահվող անձանց տրամադրվող հագուստի ձևի վերաբերյալ պահանջներն ամրագրված է Կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի թիվ 543-Ն որոշմամբ:

Ինչ վերաբերում է նոր անկողնային պարագաների տրամադրմանը, ապա հայտնում եմ, որ 2024 թվականի ընթացքում ՔԿԾ-ի կարիքները բավարարելու նպատակով, «Գնումների մասին» օրենքի համաձայն՝ իրականացվել են անկողնային պարագաների գնման ընթացակարգեր, որոնց արդյունքում ձեռք է բերվել լիովին նոր տեխնիկական բնութագրին համապատասխան անկողնային պարագաներ, մասնավորապես՝ ներքնակներ՝ պատրաստված սպունգից և սինտեպոնից:

Հարկ է նշել, որ Կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 31.-ի թիվ 1712-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել Կառավարության 2023 թվականի փետրվարի 23-ի իվ 245-Ն որոշման թիվ 1 հավելվածում, **որն ուժի մեջ է մտել 2025 թվականի հունվարի 1-ին**: Նշված որոշմամբ սահմանվել են հանդերձանքի նոր չափաքանակներ, այդ թվում նաև՝ հիգիենայի պարագաները, որոնք կտրամադրվեն արդեն իսկ շաբաթական կտրվածքով՝ անհատական փաթեթավորված: 2025 թվականի ընթացքում ՔԿԾ-ի կարիքները բավարարելու նպատակով «Գնումների մասին» օրենքի համաձայն իրականացված գնման ընթացակարգերի արդյունքում, կնքվել են պայմանագրեր և 2025 թվականի ընթացքում ձեռք կբերվի համապատասխան քանակի և տեսակի հանդերձանք:

Անդրադառնալով ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի 5-րդ հարկի լոգասենյակի վերաբերյալ բարձրացված խնդրին, ապա հայտնում եմ, որ այն չի շահագործվում, քանի որ անհրաժեշտ է իրականացնել լայնածավալ հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքներ, մասնավորապես՝ հատակի ամրացման, սալիկապատման, նոր ջրագծերի անցկացման, ջրահեռացման համակարգի հիմնանորոգման և էլեկտրամոնտաժման: Լոգասենյակի հիմնանորոգման աշխատանքները, այդ թվում նաև՝ վերանորոգման կարիք ունեցող այլ խցերի, միջանցքների, սանհանգույցների, հնարավոր կլինի իրականացնել 2025 թվականիի ընթացքում՝ համապատասխան ֆինանսական միջոցների առկայության պարագայում :

Մինչ այդ, ազատազրկված անձանց լոգանքի ընդունման իրավունքի իրացումն ապահովվում է այլ լոգասենյակներում, այդ թվում նաև՝ համապատասխան կահավորանք ունեցող խցերում:

Անդրադառնալով ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի լվացքի մեքենայի քանակի առակյության վերաբերյալ խնդրին, նշեմ, որ 2024 թվականի ընթացքում ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում անազատության մեջ պահվող անձանց միջին թվաքանակը կազմել է 70-ը, իսկ կալանավորված անձանցը՝ շուրջ 50-ը, և միայն մեկուսարանում պահվող անձանց լվացքի կազմակերպման համար հատկացվել և շահագործվել է թվով 2 լվացքի մեքենա, իսկ դատապարված անձանց համար՝ թվով 3-ը: Լվացքի մեքենաների առկա թվաքանակը (5 հատ) բավարար է լվացքի կազմակերպման գործընթացն անխոչընդոտ իրականացնելու համար:

✓ **Բռնության և խտրականության վերաբերյալ.**

Հայտնում եմ, որ Հիմնարկներում ինքնավնասման դեպքերի և դրանց պատճառների արձանագրման հաշվառումներում անձի սեռական կողմնորոշման վերաբերյալ առանձնացված հաշվառում չի իրականացվում, ուստի տեղեկատվություն այդ մասով տրամադրել հնարավոր չէ:

Ինչ վերաբերում է ազատազրկված անձանց այս կամ այն կացարանում տեղաբաշխմանը, ապա հիշյալ գործընթացն իրականացվում է ՀՀ գործող օրենսդրությամբ, ենթաօրենսդրական ակտերով սահմանված կարգերով, որոնցում ազատազրկված անձի սեռական կողմնորոշմամբ պայմանավորված դրույթներ ամրագրված չեն: Ներկայացված դիտարկումների վերաբերյալ այլ պարզաբանումներ հնարավոր չէ տրամադրել, քանի որ բացակայում է նույնականացման համար բավարար տեղեկատվությունը

Հարկ է նշել, որ ՔԿԾ-ի կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության ենթակա տարածքային մարմինների աշխատակիցներն իրենց աշխատանքային գործունեությունն իրականացնում են Սահմանադրությամբ և Քրեակատարողական օրենսգրքով ամրագրված օրինականության, մարդասիրության և օրենքի առջև ազատազրկված անձանց հավասարության և խտրականության արգելքի սկզբունքների հիման վրա՝ բացառելով ազատազրկված անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքը կամ շահագործումը:

✓ **Անձնական տվյալների գաղտնիության խախտման վերաբերյալ.**

ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի հոգեբանի կողմից ազատությունից զրկված անձանց հետ տարվող աշխատանքի գաղտնիության խախտման դեպքի իսկությունը ճշտել հնարավոր չէ, քանի որ նշված չեն մասնավորեցնող և անհատականացնող տվյալներ:

✓ **Կրթության հասանելիության խոչընդոտների վերաբերյալ.**

Հիմնարկներում տեխնիկատնտեսական սպասարկման վարձատրվող աշխատանքներում ընդգրկված և կրթության կարիք և/կամ ոչ ֆորմալ կրթական ծրագրերին մասնակցելու ցանկություն ունեցող դատապարտյալները հնարավորություն ունեն համատեղել կրթությունն աշխատանքի հետ՝ կնքելով աշխատանքային պայմանագիր 0.5 դրույքով՝ աշխատելով օրական 4 ժամ, իսկ Հիմնարկի տարածքի բարեկարգման չվարձատրվող աշխատանքներում ընդգրկված անձինք աշխատում են օրական 2 ժամից ոչ ավել, ինչը հնարավորություն է տալիս իրացնել և կրթություն ստանալու և աշխատելու իրավունքները: Հարկ է նշել նաև, որ չնայած ՔԿԾ-ի կողմից մշտապես միջոցներ են ձեռնարկվում կրթական ծրագրերն ազատությունից զրկված բոլոր անձանց հասանելի դարձնելու համար, սակայն պետք է փաստել, որ կրթական ծրագրերը կազմակերպելիս հաշվի են առնվում ինչպես օրենսդրական պահանջները, այնպես էլ ազատությունից զրկված անձանց կարիքները, նախասիրությունները և պիտանելիության սկզբունքը:

✓ **Հիմնարկների մասնագետների/աշխատակիցների կարողությունների զարգացման և հաստիքների համալրման վերաբերյալ.**

Հիմնարկներում հոգեբանների հաստիքների ավելացման հարցի քննարկումը նպատակահարմար և իրատեսական է կատարել այն դեպքում, երբ հնարավոր կլինի ամբողջովին համալրել առկա թափուր հաստիքները, որը սակայն չի հաջողվում մի շարք օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, մասնավորապես՝ առկա բոլոր թափուր հաստիքների համալրման համար մշտապես հայտարարվում են մրցույթներ, սակայն քաղաքացիական ծառայության ցածր աշխատավարձերը, հոգեբանի հաստիքի համալրման համար աշխատանքային ստաժի պահանջները և աշխատանքի ընդունվելու համար մրցութային ստանդարտ, մասնագիտական տարբերակում չունեցող ընթացակարգերը դժվարացնում են հոգեբանների թափուր հաստիքները համալրման գործընթացը:

Այս համատեքստում, ՔԿԾ-ի կենտրոնական մարմնում քննարկվում է ԱՆ ՔԿԾ-ի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացվող ստորաբաժանումների կառուցվածքային փոփոխության հնարավորությունների հարցը:

Անդրադառնալով աշխատակիցների կարողությունների զարգացման վերաբերյալ դիտարկմանը՝ հարկ է նշել, որ Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող **«Ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության ամրապնդումը»** ծրագրի շրջանակում 2024 թվականի հունվար, փետրվար և մարտ ամիսների ընթացքում իրականացվել են **«Վերապատրաստում ինքնասպանությունների կանխարգելման միջամտությունների պլանների վերաբերյալ՝ հիմնված Հայաստանի քրեակատարողական հիմնարկների համար մշակված ինքնասպանության և ինքնավնասման ռիսկի գնության և գնահատման գործիքակազմի վրա»** թեմայով վերապատրաստման դասընթացներ, որին մասնակցել են շուրջ 170 աշխատակից, այդ թվում՝ հոգեբաններ:

Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության ամրապնդումը» ծրագրի շրջանակում 2024 թվականի հունիսի 28-29-ին իրականացվել են «Ռիսկերի և կարիքների գնահատման գործիքի և ուղեցույցի վերաբերյալ վերապատրաստում ՔԿՀ-ների հոգեբանների և սոցիալական աշխատողների համար» թեմայով վերապատրաստման դասընթացներ, որին հաջորդել է Արդարադատության նախարարի համապատասխան հրամանի հիմքով ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալի ռիսկերի և կարիքների գնահատման գործիքակազմի ներդրումը:

✓ **Տեխնիկական խնդիրների վերաբերյալ.**

ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկները հիմնականում ապահովված են անհրաժեշտ գույքով, սակայն որևէ գույքի պահանջարկ առաջանալու դեպքում, համապատասխան գրության հիման վրա, տրամադրվում է պահեստում առկա գույքից, իսկ պահեստում անհրաժեշտ գույքի բացակայության դեպքում՝ այն ձեռք է բերվում գնման ընթացակարգով:

Անդրադառնալով հեռախոսակապին, հայտնում եմ, որ ՔԿԾ-ի կողմից 2024 թվականին ձեռք են բերվել նոր գերժամանակակից հակավանդալային հեռախոսային համակարգեր՝

թվով 170 հատ, նախկին 113-ի փոխարեն, որոնք տեղադրվում են բոլոր Հիմնարկներում, որոնց միջոցով կլավարկվի և հնարավոր կլինի ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապն ապահովել ավելի բարձր որակի հեռախոսակապով: Արդյունքում նաև սեփական միջոցների հաշվին բջջային ցանցեր կատարվող հեռախոսազանգերի 1 րոպեի արժեքը 19 << դրամից փոփոխվել և սահմանվել է 8.9 << դրամ: Հեռախոսային համակարգերի ամբողջական տեղադրումից հետո ծրագրային ապահովման միջոցով յուրաքանչյուր ազատությունից զրկված անձի համար նախատեսվելու է պետական միջոցների հաշվին ամսական 20 րոպե տևողությամբ հեռախոսակապից օգտվելու հնարավորություն, ինչպես նաև վերջիններս հեռախոսակապից կարողանալու են օգտվել սեփական միջոցների հաշվին՝ վերոնշյալ սակագնով:

Հարկ է նշել նաև, որ ՔԿԾ-ի կողմից առաջարկվել է Քրեակատարողական օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություն՝ պետության միջոցների հաշվին հեռախոսակապից օգտվելու ամսական մինչև 20 րոպե տևողությունն ավելացնել՝ դարձնելով ամսական մինչև 30 րոպե:

ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում հեռախոսակապի չգործելու հետ կապված գրությամբ բարձրացված խնդիրների վերաբերյալ, հարկ է նշել, որ համացանցի և հեռախոսակապի տրամադրման գործընթացն իրականացվում է օպտիկամանրաթելային մալուխներով, որակի (արագության) կամ հասանելիության հետ կապված խնդիրների առաջացման պարագայում դրանք հնարավորինս սեղմ ժամկետներում վերացվում են:

Անվտանգության և սարքերի անխափան աշխատանքն ապահովելու նկատառումներից ելնելով՝ տեսազանգերի համար ձեռք բերված պլանշետների համացանցին միացումն իրականացվում է լարային տարբերակով՝ տեսազանգի համար նախատեսված սենյակից՝ ցանցային մալուխը միացնելու միջոցով (անլար՝ WiFi տարբերակ չի նախատեսված):

Համացանցի խնդրի պատճառով տեսազանգերի տրամադրման համար ձեռք բերված պլանշետների օգտագործման հետ կապված խնդիրների մասին Հիմնարկներից տեղեկատվություն չի ստացվել: Պլանշետներն օգտագործվում են անխափան, իսկ երբեմն

առաջացած տեխնիկական խնդիրները վերացնելու համար համապատասխան մասնագետների կողմից անմիջապես ձեռնարկվում են բոլոր անհրաժեշտ միջոցները:

ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի էլեկտրամատակարարման ներքին ցանցը գործում է անխափան: Իսկ հնարավոր խափանումները պայմանավորված են՝ մատակարար կազմակերպության «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից պլանային կամ վթարային հոսանքազրկումներով:

Անհրաժեշտ է փատել նաև, որ ներկայումս ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկն ապահովված է 24-ժամյա ջրամատակարարմամբ, իսկ մասնաշենքերում ջրահեռացման կամ ջրամատակարարման հետ առաջացող խնդիրները (այդ թվում նաև՝ ազատազրկված անձանց կողմից ոչ բարեխիղճ օգտագործման արդյունքում)՝ կարճ ժամանակահատվածում վերացվում են:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՅԱՆ

Կատարող՝ Մարգարիտա Սևումյան
Քրեական օրենսդրության, քրեակատարողական
և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչություն
Հեռ. 010 59-40-20

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ամփոփագրում օգտագործված լուսանկարները պատկանում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբին:

Ամփոփագրի տարածման դեպքում պարտադիր է հղում կատարել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբին:

Ամփոփագիրը պատրաստեցին՝
Խմբի անդամները

Խմբագրեց՝
Սերգեյ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ

Դիզայնը
«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի
Ձևավորեց՝ Լևոն ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆԸ

Երևան, Հայաստան – 2025թ.
Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Prison Monitoring Group

+374 98606393

www.pmg.am